

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 351/354
ԳՄԴ 67.99(2)116.2
Հ 872

*Տպագրվում է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհուրդների որոշմամբ*

Խմբագրությամբ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր **Ա. Հ. Սիմոնյանի** և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր **Ռ. Ա. Սաֆրաստյանի**

Հովսեփյան Լ. Ս.
Հ 872 Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները/Լ. Հովսեփյան, - Եր.: 2014 – 354 էջ:

Գրքում ուսումնասիրվում և դիտարկվում են Թուրքիայի Հանրապետության զինված ուժերի համալիր արդիականացման գործընթացը, դրա ռազմաքաղաքական պատճառներն ու նշանակությունը, ռազմականացման հիմնական միտումները, պաշտպանական քաղաքականությունը, անվտանգության ոլորտի բարեփոխումները՝ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով թուրքական, ամերիկյան մի շարք պաշտոնական փաստաթղթեր, տեղեկագրեր, ինչպես նաև այլ աղբյուրներ ու վերլուծական գրականություն:

Գիրքը նախատեսված է արևելագետների, միջազգայնագետների, պատմաբանների, ուսանողների ու ընթերցող լայն շրջանակների համար: Այն կարող է ծառայել նաև որպես օժանդակ ձեռնարկ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Տարածաշրջանային քաղաքականություն» մագիստրոսական ծրագրի շրջանակում:

ԵՊՀ Գրադարան
SU0223537

ՀՏԴ 351/354
ԳՄԴ 67.99(2)116.2

ISBN 978-5-8084-1841-7

— — — հրատ., 2014
© Լ. Հովսեփյան, 2014

237096

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ЛЕВОН ОВСЕПЯН

# МОДЕРНИЗАЦИЯ ОБОРОННОГО КОМПЛЕКСА И РЕФОРМЫ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ ТУРЦИИ

*Рекомендовано к печати Учеными Советами Факультета Международных отношений ЕГУ и Института Востоковедения НАН РА*

---

YEREVAN STATE UNIVERSITY

LEVON HOVSEPYAN

# TURKEY'S DEFENSE SYSTEM MODERNIZATION AND SECURITY SECTOR REFORMS

*Is recommended for publication by the Scientific Councils of the Faculty of International Relations of YSU and the Institute of Oriental Studies of NAS RA*

**ЕРЕВАН**
**YEREVAN**
**2014**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------------------------------------------------------------7

ԳԼՈՒԽ 1. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՆԱԿԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

1.1. Թուրքիայի պաշտպանական ներուժի կայացումն ու զարգացումը Սառը պատերազմի տարիներին -------------------------------------------21

1.2. Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հիմնական միտումները Սառը պատերազմի ավարտից հետո ----------------------42

1.3. Բանակի արդիականացման գործընթացը 1990-ական թվականներին------------------------------------------------------------70

ԳԼՈՒԽ 2. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

2.1. Ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծումն ու կազմակերպչակառուցվածքային բազայի հիմնումը--------------------92

2.2. Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման միտումները------------------------------------------- 104

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱԼԻՐ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ՆԱԽԱԳԾԵՐՆ ԸՍՏ ԶՈՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

3.1. Ցամաքային ուժերի արդիականացումն ու ռազմաարդյունաբերությունը ------------------------------------------ 119

3.2. Ռազմաօդային ուժերի արդիականացման ծրագրերն ու հակաօդային պաշտպանության զարգացմանն ուղղված քայլերը -- 150

3.3. Ռազմածովային ուժերի արդիականացման նախագծերը ------- 199

3.4. Թուրքիայի «տիեզերական նախագիծը»՝ որպես բանակի արդիականացման բաղկացուցիչ -------------------------------------- 213

ԳԼՈՒԽ 4. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ
4.1. Անվտանգության ու պաշտպանության ոլորտի համակարգային բարեփոխումների խնդիրը---------------------------------------------- 222
4.2. Ազգային անվտանգության խորհրդի օրենսդրական ու կառուցվածքային բարեփոխումները. «քաղաքացիականացման» գործընթաց ---------------------------------------------------------- 232
4.3. Ազգային հետախուզական կազմակերպության «քաղաքացիականացման» և բարեփոխումների գործընթացը ------- 264
4.4. Անվտանգության համակարգի ընդհատակյա, անօրինական գաղտնի կառույցներ ու կազմակերպություններ. բացահայտումների շարք------------------------------------------------------------------------ 297

ԱՄՓՈՓՈՒՄ --------------------------------------------------------------309

ՀԱՎԵԼՎԱԾ ---------------------------------------------------------------316

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ---------------------------------------------------319

Резюме ----------------------------------------------------------------------321

Summary---------------------------------------------------------------------328

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------------------------------------------332

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումն ու անվտանգության ոլորտի բարեփոխումներն ընդգծված բնույթ են ստացել վերջին տասնամյակում: Թուրքական բանակի արդիականացումը, սպառազինման ծրագրերն ու տեղական ռազմաարդյունաբերության զարգացմանն ուղղված քայլերը նոր թափ ստացան հատկապես իշխող «Արդարություն և զարգացում» (այսուհետ՝ ԱԶԿ) կուսակցության կառավարման տարիներին: Դրան զուգահեռ էական քայլեր կատարվեցին անվտանգության ոլորտի բարեփոխումների հարցում, որոնք աննախադեպ էին հանրապետական Թուրքիայի պատմության մեջ:

Թուրքիայի զինված ուժերի (այսուհետ՝ ԶՈւ, թուրք. Silahlı Kuvvetler) արդիականացման ու անվտանգության համակարգում իրականացված բարեփոխումների ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ կիրառական կարևոր նշանակություն: Թեմայի համակողմանի ուսումնասիրությունն արդիական է ոչ միայն Թուրքիայի բանակի արդիականացման ու անվտանգային ոլորտի բարեփոխումների պատմական ժամանակահատվածի հիմնական միտումներն ու քաղաքականությունը վերհանելու, այլ նաև ժամանակակից շրջանում այդ երկրի ռազմականացման միտումներն ու ծավալները վերհանելու և համարժեքորեն գնահատելու տեսանկյունից:

Թուրքիայի ԶՈւ-ի արդիականացման միտումների ուսումնասիրումը կարևոր է այն տեսանկյունից, որ Թուրքիան վարում է տարածաշրջանում ռազմաքաղաքական ազդեցությունն ընդլայնելու և տարածաշրջանային գերտերության կարգավիճակ ձեռք բերելու քաղաքականություն, իսկ ռազմական ներուժն այդ համատեքստում դիտարկվում է առաջնային գործոններից մեկը: Հաշվի առնելով իր որոշ հարևանների հետ Թուրքիայի գրեթե մշտապես լարված հարաբերությունները, վերջին շրջանում Կիպրոսի Հանրապետության ու Սիրիայի Արաբական Հանրապետության հետ լարվածության

աճն ու նրանց նկատմամբ ռազմական ուժ գործադրելու սպառնալիքները՝ առավել ակնառու են դարձնում Թուրքիայի սպառազինման, ռազմականացման վտանգավորությունը տարածաշրջանային անվտանգության ու կայունության տեսանկյունից: Մեծ հաշվով իր շրջակայքում ազրեսիվ վարքագիծը պայմանավորված է իր ռազմական ներուժից բխող մեծ ինքնավստահությունից:

Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության հիմնական միտումները, ռազմաքաղաքական հավակնությունները, որոշ հարևանների նկատմամբ ազրեսիվ քաղաքականությունն ու այդ երկրի անկանխատեսելիության գործոնը՝ խիստ արդիական են դարձնում Թուրքիայի ռազմական ներուժի ու պաշտպանական քաղաքականության ուսումնասիրումը, հիմնական միտումների բացահայտումը:

Նկատի ունենալով տարածաշրջանում ընթացող ռազմաքաղաքական զարգացումները, անկայուն իրավիճակն ու լարվածության օջախները՝ արդիական է դառնում Թուրքիայի ռազմատեխնիկական քաղաքականության վերհանումն ու վերլուծությունը, ինչը հնարավորություն կտա որոշակիորեն գնահատել Թուրքիայի ռազմական ներուժն ու անկանխատեսելի զարգացումների պարագայում հնարավոր ազդեցությունը:

Թեմայի ուսումնասիրությունն առնչություն ունի Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության և Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի հետ: Մասնավորապես՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ որպես արտաքին սպառնալիք նշված է, որ Ադրբեջանի Հանրապետության կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանդեպ զինված ուժի կիրառման բացահայտ սպառնալիքների պարագայում Թուրքիայի Հանրապետությունը, լինելով Ադրբեջանի ռազմավարական դաշնակիցը, նույնպես կարող է սպառնալիք ստեղծել:

Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինում որպես ռազմական անվտանգության արտաքին սպառնալիքներ են

նշված անվերահսկելի սպառազինման և վերազինման գործընթացը, սպառազինությունների մրցավազքը, Հայաստանի Հանրապետության սահմանների մոտ զորքերի խմբավորումների ստեղծումը, տեղաբաշխումը, դրանց խոշորամասշտաբ կուտակումները և տեղաշարժը, այդ թվում՝ զորավարժությունների անվան տակ: Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված դաշինքների ստեղծումը, ամրապնդումն ու ընդլայնումը, մասնավորապես՝ Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության ռազմավարական դաշինքը, վերջինիս կողմից Հայաստանի Հանրապետությունը շրջափակելու քայլերը, որոնք դիտարկվում են որպես ուժի կիրառում, Հայաստանի Հանրապետությանը սահմանակից պետություններում ներքաղաքական միջավայրի ապակայունացումը, ներքին բախումներն ու ռազմական գործողությունները, ինչպես նաև էթնիկական հակամարտությունները, որոնք կարող են սպառնալ Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությանը: Նման ձևակերպումներից ելնելով՝ ակնհայտ է, որ Թուրքիայի կողմից իրականացված և իրականացվող ռազմական արդիականացման խոշորամասշտաբ ծրագրերը սպառազինությունների նոր մրցավազքի են հանգեցնում տարածաշրջանում: Բացի այդ, Թուրքիայի և Ադրբեջանի միջև սերտ ռազմական ու ռազմատեխնիկական համագործակցությունն ուղղակի սպառնալիք է ներկայացնում Հայաստանի ազգային անվտանգությանը: Հաշվի առնելով Թուրքիայի հետ ընդհանուր սահմանի առկայությունն ու այդ երկրի արևելյան շրջաններում Թուրքիայի կողմից «Քուրդիստանի բանվորական կուսակցության» դեմ իրականացվող գործողությունները ոչ այլ ինչ են, քան ռազմական գործողություններ, և դրանք կարող են դուրս գալ վերահսկողությունից ու լուրջ ազդեցություն ունենալ տարածաշրջանային անվտանգության վրա, կարող են իրենց ազդեցությունն ունենալ նաև Հայաստանի անվտանգության վրա:

Սույն աշխատության նպատակն է, մեկ ամբողջության մեջ ուսումնասիրելով 20-րդ դարի վերջերին և 21-րդ դարի սկզբներին Թուրքիայի պաշտպանական ոլորտի արդիականացումը, ցույց տալ

Թուրքիայի ԶՈւ-ի համալիր արդիականացման միտումներն ու իրականացված ծրագրերը, ռազմաարդյունաբերական համալիրի կայացման ու զարգացման գործընթացը, անվտանգության ոլորտի բարեփոխումները:

Ուսումնասիրության համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Վերհանել Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հիմնական միտումները, անվտանգության մարտահրավերներն ու դրանց հակազդման հիմնական հայեցակարգային մոտեցումներն ու հրամայականները:
2. Ներկայացնել ու վերլուծել 1990-ական թթ. նախաձեռնված բանակի արդիականացման գործընթացն ու այդ ուղղությամբ իրականացված քայլերը:
3. Ուսումնասիրել ազգային ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման հրամայականի առաջացման պատճառներն ու դրա կազմակերպչա-կառուցվածքային բազայի հիմնման քաղաքականությունն ու ծրագրերը:
4. Պաշտոնական փաստաթղթերի, տեղեկագրերի ու այլ նյութերի ուսումնասիրման միջոցով ցույց տալ ազգային ռազմաարդյունաբերության զարգացման հիմնական միտումները, գնահատել գրանցած ձեռքբերումներն ու բանակի արդիականացման գործում դրանց դերակատարությունը:
5. Ուսումնասիրել ԶՈւ-ի համակարգում իրականացված արդիականացման ծրագրերն ու ռազմատեխնիկական նախագծերն, ըստ զորքերի տեսակների՝ վերհանել սպառազինման միտումներն ու ռազմատեխնիկական համագործակցության շրջանակներն այլ երկրների հետ, ցույց տալ ռազմականացման ծավալները:
6. Ուսումնասիրել անվտանգության ոլորտում իրականացված բարեփոխումները, անվտանգության մարմինների

արդիականացման ու վերափոխումների գործընթացը, բանակի քաղաքական ազդեցության նվազման միտումները և այդ հարցում ԱԶԿ-ի դերակատարումը, դիտարկել Թուրքիայի անվտանգության ու պաշտպանության ոլորտում իրականացված համակարգային բարեփոխումների խնդիրը:

Աշխատությունն իր բովանդակությամբ ու հարցադրումներով առաջինն է, որտեղ փորձ է արվում ուսումնասիրել ու գնահատել Թուրքիայի ԶՈւ-ի համալիր արդիականացման գործընթացը, դրա ռազմաքաղաքական պատճառներն ու նշանակությունը, ռազմականացման հիմնական միտումները, անվտանգության համակարգի բարեփոխումները՝ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք թուրքական, ամերիկյան պաշտոնական փաստաթղթեր, տեղեկագրեր, ինչպես նաև այլ աղբյուրներ ու վերլուծական գրականություն:

Աշխատության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 20-րդ դարի վերջերն ու 21-րդ դարի սկզբները: Ժամանակագրության սկիզբը հանդիսանում է 1990-ական թթ. սկիզբը, երբ Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիան նախաձեռնեց պաշտպանական նոր քաղաքականություն և ակտիվացրեց ԶՈւ-ի արդիականացման ծրագրերը: Ժամանակագրությունն ընդգրկում է մինչև 2013 թ. ներառյալ: Նման ժամանակագրության ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ շրջանում պաշտպանական ոլորտում Թուրքիայի իրականացրած արդիականացման ծրագրերն իրենց մասշտաբով ու նշանակությամբ աննախադեպ էին: Հաշվի առնելով ուսումնասիրության համար պատմական որոշակի ժամանակաշրջանի ներկայացման կարևորությունը՝ անհրաժեշտ ենք համարել հակիրճ անդրադառնալ նաև Սառը պատերազմի տարիներին Թուրքիայի պաշտպանական համակարգի կայացմանն ու զարգացմանը:

Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, թուրքերեն ու անգլերեն լեզուներով տարբեր աղբյուրների ու տեղեկատվավերլուծական գրականության հիման վրա: Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուրներ են օգտագործվել թուրքական պաշտոնական փաստաթղթերը, տեղեկագրերն ու մի շարք զեկույցներ, ինչպես օրինակ՝ Թուրքիայի «Պաշտպանական արդյունաբերության քաղաքականությունը և ռազմավարությունը» փաստաթուղթը (Türk Savunma Sanayii Politikası ve Stratejisi), Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության գործունեության 2008-2012 թթ. տարեկան զեկույցները, «ՊԱԳՎ 2007-2011 թթ. ռազմավարական պլան»-ը (Savunma Sanayii Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011), «Պաշտպանական արդյունաբերության 2012-2016 թթ. Ռազմավարական պլանը», Թուրքիայի ազգային պաշտպանության նախարարության 2008 թ. գործունեության տարեկան զեկույցը (Milli Savunma Bakanlığı, Faaliyet Raporu 2008), առանձին ռազմաարդյունաբերական ընկերությունների տարեկան հաշվետվությունները (Aselsan: Faaliyet Raporu 2008, Havelsan, 2007 Faaliyet Raporu, Makina ve Kimya Endüstrisi Genel Müdürlüğü, 2008 yılı Faaliyet Raporu), Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների կազմակերպության («TÜBITAK») փաստաթղթերը, Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի ու գլխավոր քարտուղարության մասին օրենքը, Թուրքիայի զինված ուժերի ներքին ծառայության մասին օրենքը և այլն[1]: Ռուսերեն և անգլերեն լեզունե-

---

[1] Տես` Savunma Sanayii Politikası ve Stratejisi, Vizyon 2023 Projesi, Savunma, Havacılık ve Uzay Paneli, Panel Raporu, Ek-12, TÜBITAK, Temmuz 2003, Ankara, http://www.tubitak.gov.tr/tubitak_content_files/vizyon2023/shu/EK-12.pdf; Savunma Sanayii Müsteşarlığı 2008 Yılı Faaliyet Raporu, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2008%20Yılı%20Faaliyet%20Raporu.pdf; Savunma Sanayii Müsteşarlığı 2010 Faaliyet Raporu, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2010/files/ssm_2011.pdf; Savunma Sanayii Müsteşarlığı Faaliyet Raporu 2012, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2012%20Y%C4%B1l%C4%B1%20Faaliyet%20Raporu.pdf.
Savunma Sanayii Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011, http://www.sp.gov.tr/documents/planlar/SSMSP0711.pdf; Savunma Sanayii Müsteşarlığı

րով օգտագործվել են ԽՍՀՄ Արևելագիտության ինստիտուտի տեղեկագրերը, ՌԴ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տեղեկագրերից, Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի (SIPRI) և Ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտի (IISS) տարեգրքերից ու տեղեկատվական բազայից[2]: Որպես կարևոր սկզբնաղբյուրներ են օգտագործվել ամերիկյան ու թուրքական մի շարք տեղեկագրային հրատարակություններ, ինչպես օրինակ՝ «Human Rights Watch» կազմակերպության ու Թուրքիայի Տնտեսական ու սոցիալական հետազոտությունների հիմնադրամի (TESEV), ինչպես նաև Թուրքիայի առաջընթացի վերաբերյալ Եվրահանձնաժողովի տարեկան զեկույցները[3]: Թուրքիայի ռազմաարդյունաբերական նախագծերի ու

---

2012-2016 Stratejik Plan, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Documents/SP/Sp2012_2016/index.html; Aselsan: Faaliyet Raporu 2008, http://www.aselsan.com.tr; Makina ve Kimya Endüstrisi Kurum Genel Müdürlüğü 2008 yılı Faaliyet Raporu, http://www.mkek.gov.tr/Icerikler/KFrQEtJW.pdf; Türk Savunma, Havacılık ve Uzay Sektörü Değerlendirmesi, Vizyon 2023 Projesi, Savunma Havacılık ve Uzay Sanayii Panel Raporu/Ek-4, TÜBITAK, Temmuz 2003, Ankara, http://www.tubitak.gov.tr/tubitak_content_files/vizyon2023/shu/EK-04.pdf; Türk Uzay Sektörüne Ilişkin Değerlendirme, Savunma Havacılık ve Uzay Sanayii Panel Raporu/Ek-5, TÜBITAK, Temmuz 2003, Ankara, http://www.tubitak.gov.tr/tubitak_content_files/vizyon2023/shu/EK-05.pdf; MGK ve MGK Genel Sekreterliği Kanunu, http://www.mgk.gov.tr/Turkce/kanun.html; TÜRK SİLAHLI KUVVETLERİ İÇ HİZMET KANUNU, http://kanunlar.biz/kanunlar/1044.html.

[2] Տե՛ս Современная Турция, справочник, Москва. Изд. восточной литературы. 1958; Современная Турция. справочник, Москва. «Наука». 1965, Турецкая Республика, справочник. Москва. «Наука», 1975; Вооруженные силы и военная экономика стран Азии// Информационно-аналитический справочник-М., Институт Востоковедения РАН, 2000; The Military Balance 2009, International Institute for Strategic Studies, London: Routledge 2009; The Military Balance 2010, International Institute for Strategic Studies, London: Routledge 2010; SIPRI Arms Transfers Database, http://www.sipri.org/contents/armstrad/at_data.html; Military Expenditure, SIPRI Yearbook 2011, Armaments, Disarmament and International Security, Oxford University Press, 2011;

[3] Տե՛ս Turkey Export-Import Trade and Business Directory, International Business Publications, USA, Vol. 2, 2007; Weapons Transfers and Violations of Laws of War in Turkey, Human Rights Watch Arms Project, USA 1995; Turkey, The General Directorate of Press and Information, GAYE Matbaacılık Sanayi ve Ticaret AŞ, Ankara, October 1990;

սպառազինման ծրագրերի հետ կապված փաստական տվյալների ու տեղեկատվության ստացման առումով օգտագործվել են Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության «Savunma Sanayii Gündemi» պաշտոնական պարբերականի մի քանի համարներ[4]:

Օգտագործվել են թուրք մի շարք հեղինակների հոդվածներն ու մենագրությունները: Դրանցից կարող ենք, օրինակ նշել Ն. Ուսլուի, Ս. Յըլմազի, Գ. Գյունկյուր Շենեսենի, Հ. Գերգերի, Ու. Օզդաղի, Գ. Քորքմազի, Ի. Աքչայի, Ու. Ձիզրե Սաքալիօղլուի, Շ. Էրգյուվենչի, Շ. Ուղումի, Շ. Էլեքդաղի, Ա. Քյուլեբիի, Մ. Աքնյուրի, Ա. Բալջըի, Ս. Բայքալի, Ս. Չաղափթայի, Է. Շիմշեքի և Ի. Բահարի հոդվածներն ու աշխատությունները[5], որոնք անդրադառնում են Թուրքիայի պաշտ-

Almanak Türkiye 2006-2008: Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, ed. A. Bayramoğlu, A. Insel, Temmuz 2009, TESEV, http://www.tesev.org.tr/Upload/Publication/e8b2801a-bde2-45a0-a736-da06acb7416c/almanak2008_02_07_09.WEB%20icin.pdf; Almanak Türkiye 2006, http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitaplar/turkiye2006/turkey/244-245.htm; Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, ed. Ümit Cizre, DCAF-TESEV Güvenlik Sektörü Çalışmaları Dizisi Özel Yayın, Mayıs 2006 TESEV, (280 sayfa), http://www.tesev.org.tr/Upload/Publication/c2e4e702-300a-4b46-b48e-ba55e802087b/Almanak-2005-Turkce-Tam%20Metin.pdf; 2003 regular report on Turkey,s progress toward EU accession, http://www.ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/2003/rr_tk_final_en.pdf; 2004 regular report on Turkey,s progress toward EU accession; Commission of the European Communities Brussels, 06.10.2004; Turkey 2008 Progress Report, http://ec.europa.eu/enlargement/pdf/press_corner/key-documents/reports_nov_2008/turkey_progress_report_en.pdf; Turkey: 2012 progress report, http://ec.europa.eu/enlargement/pdf/key_documents/2012/package/tr_rapport_2012_en.pdf.

[4] Տես՝ Türk Savunma Sanayii 2010 Yılı Performansı, Savunma Sanayii Gündemi, Sayı 15, 2/2011, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/SSM%20Dergisi/SSM_15.pdf; ALTAY Projesi, Milli Imkanlarla Modern Tank Üretimi, Savunma Sanayii Gündemi, Savunma Sanayi Müsteşarlığı, Temmuz 2008, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/SSM%20Dergisi/2008-7-ssm-dergi.pdf; Milli Gemi Projesi, Denizaltı Savunma Harbi ve Keşif Karakol Gemisi, Savunma Sanayii Gündemi, Savunma Sanayii Müsteşarlığı, Sayı: 2, Ekim 2007.

[5] Տես՝ Nasuh Uslu, The Turkish-American Relationship Between 1947 and 2003: The History of a Distinctive Alliance, Nova Science Publisher Inc., New York, 2003; Sait Yılmaz, Dünya Ordularındaki Değişim ve Türk Ordusunun Profesyonelleşmesi,

պանական-անվտանգային քաղաքականության, բանակի հիմնախնդիրներին ու անվտանգության համակարգի բարեփոխումներին: Որոշ հեղինակներ հաճախ ցուցաբերում են խիստ ուռճացված ու գաղափարականացված մոտեցումներ Թուրքիայի տարածաշրջանային դերին ու նշանակությանն անդրադառնալիս: Աշխատության պատրաստման հարցում մեծ կարևորություն է ունեցել Բ. Օրանի խմբագրությամբ «Թուրքական արտաքին քաղաքականությունը»

---

http://orkam.aydin.edu.tr/ORDUNUNPROFESYONELLESMESI(3a4b).pdf, Gülay Günlük Şenesen, Türk Silahlı Kuvvetleri'nin Modernizasyon Programının Bir Değerlendirmesi, Türk Dış Politikasının Analizi, Faruk Sönmezoğlu, DER yayınları, Istanbul-2001; Haluk Gerger, Türk Dış Politikası'nın Ekonomi Politiği, Soğuk Savaş'tan Yeni Dünya Düzeni'ne, Ikinci Baskı, Istanbul, Belge Yayınları 1999; Ümit Özdag, Ersel Aydınlı, Winning A Low Intensity Conflict: Drawing Lessons From The Turksih Case, Democracies and Small Wars, ed. Efraim Inbar, London, Frank Cass 2003; Goksel Korkmaz, An Analysis of Turkey's Defense Systems Acquisition Policy, MBA Professional Report, Naval Postgraduate School, Monterey, California, March 2009; Ismet Akça, Türkiye'de Askeri-Iktisadi Yapı: Durum, Sorunlar, Çözümler, Haziran 2010, TESEV Yayınları, Istanbul; Umit Cizre Sakallioglu, The Military and Politics: A Turkish Dilemma, Armed forces in the Middle East: politics and strategy, ed. Barry M. Rubin, Thomas A. Keaney, Frank Cass Publishers, 2002; Sadi Ergüvenç, Turkey's Security Perceptions, Journal of International Affairs, Vol. 3, N. 2, June-August 1998, http://sam.gov.tr/wp-content/uploads/2012/02/SadiErguvenc.pdf; Şebnem Udum, Missile Proliferation in the Middle East: Turkey and Missile Defence, Turkish Studies Institute, Vol. 4, N. 3, 2003; Şükrü Elekdağ, 2 ½ War Strategy, Perceptions, Journal of International Affairs, Vol. 1, March May,1996,http://www.sam.gov.tr/perceptions/Volume1/March-May1996/212WARSTRATEGY.pdf; Ali Külebi, Türkiye'nin Askeri Stratejisi, Gücü ve Geleceği, Turkiye Stratejik Araştırmalar Merkezi (TUSAM), 02.08.2004; Ali Külebi, Defense Concept of Turkey is Changing, April 2008, http://www.eurasiacritic.com/articles/defence-concept-turkey-changing; Müge Aknur, TSK'nin Dış Politika Üzerindeki Etkisi, Türkiye'nin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efegil, Ankara, Nobel yayın, 2010; Ali Balci, 1990 sonrası Türk Dış Politikası Üzerine Bazı Notlar: Avrupa Birliği ve Kıbrıs Örneği, Türkiyenin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efegil, Ankara, Nobel yayın, 2010; Sanem Baykal, Turkey-EU Relations in the Aftermath of the Helsinki summit: An Analysis of Copenhagen Political Criteria in Light of the Accesion Partnership, National program and the Regular Reports, Ankara Review of European Studies, vol. 2, No.3, 2002; Soner Çagaptay, European Union Reforms Diminish the Role of the Turkish Military: Ankara Knocking on Brussels' Door, The Washington Institute of Near East Policy, PolicyWatch#781, August 12, 2003; Şimşek E., Bahar I., Türkiye'de Istihbaratçılık ve MIT, Kum Saati Yayıncılık, Istanbul 2004;

երկհատորյակը[6], ինչպես նաև Գ. Գյունլյուք Շենեսենի «Թուրքիայի զինված ուժերի արդիականացման ծրագրի գնահատականը» ուսումնասիրությունը[7], որոնցում հեղինակներն անդրադարձել են Թուրքիայի բանակի արդիականացման ռազմավարությանն ու ռազմարդյունաբերության խնդիրներին: Թուրք հետազոտողներ Մ. Աքնուրն ու Ա. Բալչըն իրենց հոդվածներում անդրադառնում են նաև 1990-ական թթ. ներքին ու արտաքին քաղաքական հարցերում թուրքական զինվորականության դերակատարությանը, նաև հըստակ ցույց տալիս հատկապես ներքին ու արտաքին քաղաքական հիմնախնդիրների անվտանգայնացման միջոցով երկրի հասարակական-քաղաքական կյանքում թուրքական բանակի մեծ դերակատարության ապահովումն ու դրանց գործադրման մեխանիզմները[8]:

Օգտագործվել են նաև թուրք բարձրաստիճան զինվորականների, պետական պաշտոնյաների հոդվածներ, հրապարակումներ ու ելույթներ[9]:

---

[6] Տես` Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 1, (1919-1980), Istanbul, Iletişim yayınları 2002; Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 2, (1980-2001), Istanbul, Iletişim yayınları 2002;

[7] Տես` Gülay Günlük Şenesen, Türk Silahlı Kuvvetleri'nin Modernizasyon Programının Bir Değerlendirmesi, Türk Dış Politikasının Analizi, ed. Faruk Sönmezoğlu, DER yayınları, Istanbul-2001;

[8] Տես` Müge Aknur, TSK'nin Dış Politika Üzerindeki Etkisi, Türkiye'nin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efegil, Ankara, Nobel yayın, 2010, Ali Balci, 1990 sonrası Türk Dış Politikası Üzerine Bazı Notlar: Avrupa Birliği ve Kıbrıs Örneği, Türkiyenin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efegil, Ankara, Nobel yayın, 2010.

[9] Տես` Hikmet Sami Turk. Turkish Defense Policy. The Washington Institute For Near East Policy, March 3, 1999, http://www.washingtoninstitute.org/media/samiturk.htm; Suat Ilhan, Geopolitical developments and the Turkish world, Eurasian Studies, TIKA, Vol. 2, N. 3, 1995.

A STATEMENT by TAFF, Defence Turkey, Vol. 2 Issue: 7, 2007; Luncheon Remarks by General Ilker Başbuğ, Deputy Chief of Turkish General Staff, http://www.tsk.tr/eng/konusma/gnkurIIncibsk_atckonusmasiogleyemegi_eng_06062005.htm; FNSS A Leader Company in Armored Combat Vehicles / Interview with Mr. Nail Kurt, Defence Turkey, Volume: 2, Issue:10 Year: 2008: Ռ. Թ. Էրդողանի ելույթը 2008 թ. Altay տանկերի արտադրության պայմանագրի ստորագրման հանդիսավոր արարողության ժամանակ` http://www.netizle.tv/video/13443/milli-tank-altay-2011-de-silahli-kuvvetlere-katiliyor;

Հայրենական հեղինակներից սույն աշխատության համար օգտագործվել են Ռ. Սաֆրաստյանի, Ա. Ավագյանի, Ս. Մինասյանի, Մ. Մելքոնյանի, Ա. Այվազյանի, Մ. Աղաջանյանի և մի շարք այլ հեղինակների արժեքավոր հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնք անդրադառնում են Թուրքիայի ռազմաքաղաքական հիմնախնդիրներին ու պաշտպանական ոլորտին[10]: Մասնավորապես՝ Ռ. Սաֆրաստյանն իր «Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև..., Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային հոլովույթներում» հոդվածների ժողովածուում հանգամանորեն ներկայացնում և վեր է հանում ժամանակակից Թուրքիայում առկա աշխարհաքաղաքական տեսություններն ու մոտեցումները քաղաքական ու գիտական շրջանակներում, որոնք հնարավորություն են տալիս ավելի հստակ պատկերացնել ինչպես Թուրքիայի արտաքին քաղաքականության, այնպես էլ պաշտպանական քաղաքականության հիմնական միտումները: Այս համատեքստում կարևոր է նաև Ա. Այվազյանի «Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի» մենագրությունը, որտեղ Թուրքիայի պաշտպանական ռազմավարությունը գնահատվում է Հա-

[10] Տես՝ Ռ. Սաֆրաստյան, Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև..., Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային հոլովույթներում /2001-2003 թվականների հոդվածներ և հարցազրույցներ/, Եր. 2003: Ա. Ավագյան, Բանակի դերը Թուրքիայի տնտեսական համակարգում, Հայկական բանակ, թիվ 4, 2006; Մինասյան Ս., Իսրայելա-թուրքական ռազմաքաղաքական համագործակցությունը քրդական հիմնախնդրի համատեքստում, «21-րդ դար», N. 4, Երևան, 2006; Ս. Մինասյան, Թուրքական հանրապետության զինված ուժերը, Թուրքիա. Անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները.-Եր.: Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Վերլուծական նյութեր, թողարկում 1, 2007; Մ. Մելքոնյան, Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները, Հայ զինվոր, թիվ 7, 20-27 փետրվար, 1999; Ա. Այվազյան, Հայաստանի պաշտպանական հայեցակարգը, Ռազմավարության և անվտանգության հարցեր, Ա. Այվազյանի խմբ., «Հայրենատիրություն» մատենաշար 2, «Արարատ» ռազմավարական կենտրոն, Եր. 2007; Մ. Աղաջանյան, Թուրքիայի ազգային անվտանգությունը. Հայեցակարգերն ու սկզբունքները, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Վերլուծական նյութեր 1, Եր. 2007:

յաստանի Հանրապետության ազգային անվտանգության տեսանկյունից[11]:

Արևմտյան հեղինակներից հիշատակման արժանի են Ջ. Զանոտիի, Ու. Հեյլի, Յ. Օ. Լեսսերի, Ու. Դարքի, Ն. Գիլբիի, Ռ. Վեյցի հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնք անդրադառնում են Թուրքիայի արտաքին քաղաքական, պաշտպանական ու ռազմատեխնիկական խնդիրներին[12]: Թուրքիայի ԶՈւ-ի արդիականացման ու ռազմաարդյունաբերության մի շարք հիմնախնդիրներին են նվիրված Ս. Թոլբերթի, Ջ. Էլիսոնի, Է. Շոուի, Է. Հեն-Թովի, Մ. Ռոբերտ Հիկքոքի ուսումնասիրությունները: Ամերիկացի հետազոտող Մ. Ռոբերտ Հիկքոքն իր «Գերիշխանության բարձրացումը. Թուրքիայի ռազմավարության ու ռազմական արդիականացման միջև ճեղքը» արժեքավոր ուսումնասիրության մեջ օբյեկտիվ ու անկողմնակալ անդրադարձ է կատարում հատկապես 90-ական թթ. Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հայեցակարգային առանձնահատկություններին ու բանակի արդիականացման ռազմավարությանը՝ իրավացիորեն դրանք գնահատելով որպես տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից խնդրահարույց[13]:

---

[11] Տես՝ Ա. Այվազյան, Հիմնադրույթներ՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, Մաս 1 -Եր.: Հեղ. հրատ., 2003:

[12] Տես՝ Jim Zanotti, Turkey-U.S. Defense Cooperation: Prospects and Challenges, Congressional Research Service, April 8, 2011; Wiliam Hale, Turkish Foreign Policy, 1774-2000, Frank Cass, London-Portland, 2002; Ian O Lesser, Bridge or Barrier? Turkey And The West After The Cold War, Prepared for the United States Air Force and the United States Army.", RAND, 1992; William J. Durch, Constracting Regional Security: The Role of Arms Transfers, Arms Control, and Reassurance, The Century Foundation Inc., PALGRAVE, 2000; Nicholas Gilby, Turkey and the Arms Trade 1998-2002: A Precis, Nurturing Turkey's War Machine, March 2003, http://www.caat.org.uk/resources/publications/countries/turkey-precis-0303.pdf; Weitz Richard, Reducing its Dependence on Foreign Arms Suppliers, Turkey Enhances Its Strategic Autonomy, Turkey Analyst, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program Joint Center, Vol. 3, No. 14, 2010, http://www.silkroadstudies.org/new/inside/turkey/2010/100830B.html;

[13] Տես՝ Steve Tolbert, Defense Industrial Cooperation, The DISAM Journal, Spring 1995; George B. Allison, Brian W. Daugherty, The Turkish Navy's Quest for Modernisation, The DISAM Journal, Spring 1995; Ed Shaw, The Sky is the Limit: Turkish Air Force Modernization, The DISAM Journal, Spring 1995; E. Hen-Tov, The Political Economy of

Ամերիկացի հետազոտող Է. Հեն-Թովն իր «Թուրքիայի ռազմական արդիականացման քաղաքական տնտեսությունը» հոդվածում ներկայացնելով և վերլուծելով Թուրքիայի ռազմական արդիականացման քաղաքականությունը արտաքին քաղաքական ու տնտեսական փոխգործակցության համատեքստում՝ նշում է, որ բանակի արդիականացումը ոչ միայն նպատակ էր, այլ նաև որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության միջոց՝ Արևմուտքի երկրների հետ իր հարաբերություններում: Գնահատելով 1990-ական թթ. նախաձեռնված լայնամասշտաբ ռազմական արդիականացումն ու սպառազինման միտումները՝ հեղինակը գտնում էր, որ տարածաշրջանային մակարդակում Թուրքիայի հարևանների հետ ռազմական անհամաչափությունը հետագայում էլ ավելի խորանալու միտում է ունենալու[14]:

Ռուս որոշ հեղինակներ՝ Ա. Կոսիկովը, Ա. Գուրևը, Մ. Մառտովը, Ա. Արեշևը, Զ. Գելմանը, Ն. Սոմովը, Ա. Ֆեդինն իրենց ուսումնասիրություններում ևս տարբեր առումներով անդրադարձել են Թուրքիայի ԶՈւ-ի ու այլ երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցության խնդիրներին[15]: Հատկապես «Իսրայելի ու Մերձավոր Արևելքի ուսումնասիրման ինստիտուտի» (ИИИиБВ) շրջա-

Turkish Military Modernization, Middle East Review of International Affairs, Vol. 8, No. 4 (December 2004); Michael Robert Hickok, Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization, Parameters, Summer 2000, http://www.carlisle.army.mil/usawc/parameters/Articles/00summer/hickok.htm;

[14] Տե՛ս E. Hen-Tov, The Political Economy of Turkish Military Modernization, Middle East Review of International Affairs, Vol. 8, No. 4 (December 2004).

[15] Տե՛ս А. Косиков. Военно-политический потенциал Турции// Востоковедный сборник. Вып. 2, М., 2001; А. Гурьев. Турция-Израиль: по пути укрепления военного сотрудничества. http://www.iimes.ru/rus/stat/2006/24-01-06.htm; А. Гурьев. О новом вертолетном тендере в Турции. ИИИиБВ, http://www.iimes.ru/rus/stat/2005/11-03-05.htm; Андрей Арешев, Вооруженные силы и внешнеполитический курс Турции на современном этапе, Ռազմավարության և անվտանգության հարցեր, Ա. Այվազյանի խմբ., «Հայրենատիրություն» մատենաշար 2, «Արարատ» ռազմավարական կենտրոն, Եր. 2007; З. Гельман, «Анка»-в воздухе. Независимое военное обозрение, No. 32, (27 Августа-2 Сентября), 2010; Н. Сомов, Состояние и перспективы развития ВВС Турции// Зарубежное военное обозрение. № 4, 2009; А. Федин. Военно-морские силы Турции// Зарубежное военное обозрение. № 5, 1997.

նակում կատարված իրավիճակային ու թեմատիկ ուսումնասիրություններում և հրապարակումներում պարբերաբար անդրադարձներ են եղել ինչպես Թուրքիայի պաշտպանական ոլորտի խնդիրներին, այնպես էլ ռազմատեխնիկական քաղաքականությանն ու այդ ոլորտում մի շարք երկրների հետ համագործակցության ասպեկտներին[16]: Մասնավորապես՝ ռուս հեղինակներից Մ. Մարտովն իր «Թուրքիայի Հանրապետության ռազմատնտեսական քաղաքականությունը և նրա համագործակցությունը արտասահմանյան երկրների հետ» հոդվածում[17] բավական հարուստ փաստերով ներկայացնում է Թուրքիայի ռազմաարդյունաբերական ոլորտում արտերկրների հետ համագործակցությունն ու իրականացված ծրագրերը, ինչը, փաստորեն, այդ բնագավառում ռուսական արևելագիտության ներկայացուցիչների կողմից կատարված առաջին հիմնական ուսումնասիրություններից կարելի է համարել:

Ուսումնասիրության համար օգտագործված աղբյուրների ցանկում բավական մեծ թիվ են կազմում ինչպես թուրքական, այնպես էլ ռուսական ու արևմտյան տարաբնույթ պարբերականները, մամուլը, տեղեկատվական ու վերլուծական էլեկտրոնային կայքերը: Դրանցում գերակշռում են հատկապես թուրքական ժամանակակից մամուլն ու պարբերականները, էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները (Aksiyon, Akşam, Hürriyet, Milliyet, Radikal, Sabah, Star, Yeni Şafak, Taraf, Zaman և այլն):

[16] Տե՛ս Об изменениях в военно-политической обстановке на Ближнем Востоке и в Северной Африке (13-19 июня 2011 года), 20.06.2011, http://www.iimes.ru/rus/stat/2011/20-06-11a.htm; А. Гурьев. О российско-турецком военно-техническом сотрудничестве, ИИИиБВ, 27.11.2004; М. Вихрев. "Военные профессионалы Турецкой Республики как резерв государственного управленческого аппарата", Офицерский корпус ближневосточных государств (сборник статей), ИИИиБВ, М., 2004.

[17] Տե՛ս М. Мартов. Военно-экономическая политика Турецкой Республики и ее сотрудничество с зарубежными странами// Армия и власть на Ближнем Востоке: от авторитаризма к демократии. (сборник статей), ИИИиБВ, М. 2002.

# ԳԼՈՒԽ 1.
# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՆԱԿԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

## 1.1. Թուրքիայի պաշտպանական ներուժի կայացումն ու զարգացումը Սառը պատերազմի տարիներին

Ժամանակակից Թուրքիայի ԶՈւ-ի կազմակերպչա-կառուցվածքային համակարգը, հիմնական սպառազինության բազան մինչև վերջին տարիները հիմնականում Սառը պատերազմի տարիներից մնացած ժառանգություն էր: Եվ ընդհանրապես, Թուրքիայի ժամանակակից անվտանգության-պաշտպանության համակարգի կայացումն ու զարգացումը եղել է ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետո Արևմուտքի՝ հատկապես Միացյալ Նահանգների գործուն աջակցությամբ: Ուստի, կարևոր ենք համարում անդրադառնալ Սառը պատերազմի տարիներին թուրքական ԶՈւ-ի զարգացման հարցում ՆԱՏՕ-ի անդամ երկրների ցուցաբերած աջակցությանը:

Երկրորդ աշխարհամարտից հետո խորհրդաթուրքական լարված հարաբերությունները Թուրքիայի՝ արևմտյան ռազմաքաղաքական համակարգին սերտ ինտեգրվելու հիմնական պատճառներից էին: ԽՍՀՄ-ի հետ լարված հարաբերություններն ու իր ռազմական անվտանգության ապահովման հետ կապված մտավախությունները Թուրքիայի համար առաջնահերթ դարձրեցին ԱՄՆ-ի հետ ռազմաքաղաքական մերձեցումն ու դաշնակցային հարաբերությունների հաստատումը:

Դեռևս ՆԱՏՕ-ին անդամակցելուց առաջ ԱՄՆ-ը Թուրքիայի հետ ստորագրեց պայմանագրեր և սկսեց ռազմական ու տնտեսական օգնություն տրամադրել: 1946 թ. փետրվարին ստորագրված պայմանագրի շրջանակներում Միացյալ Նահանգները Թուրքիային 10 մլն դոլար վարկ էր հատկացրել՝ ամերիկյան ռազմական նշա-